




ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Զի «Ո՛վ է մարդ որ կեցցէ և ոչ մեղիցէ»:

Ահա գիտակցական-զգացական ներքին պայմանը, որ որպէս մղիչ ուժ, հոգեկան անհրաժեշտությունը կստեղծէ Աստուծո տունը գալու և աղոթելու:

Միայն մեղավոր ու սխալական ըլլալու գիտակցությամբ է, որ աղոթքը իմաստ կստանա: Միայն այն ատեն խնդրելիք մը կրնանք ունենալ, միայն այն ատեն կրոնական-հոգևոր մթնոլորտը կրնանք ապրիլ: Այն ատեն միայն եկեղեցական երաժշտության քաղցրությունը լիովին կրնանք ըմբռնել, այն ատեն միայն սուրբերու տանջված դեմքերը կրնանք թափանցել, այն ատեն միայն կրնանք Հիսուսը ճանչնալ: Վերջապէս, այն ատեն միայն կրնանք Ավետարանը ըմբռնել, ու այն ատեն է, որ կրնանք նաև սուրբ պատարագի խորհուրդը հասկնալ»:

(Վազգեն վրդ. Պալճյան, «Մեր պատարագը», Բուքրեշ, 1945 թ., էջ 8—25)

Սուրբ պատարագն այն խորհուրդն է, որը մատուցվում է ի հիշատակ այն գերագույն զոհաբերության, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, կատարեց Գողգոթայի բարձունքի վրա խաչ բարձրանալով՝ հաշտություն կնքելու Աստուծո և մեղավոր մարդկության միջև: Բահանան, որպէս խորհրդակատար, մատուցում է այս զոհաբերությունը Քրիս-

տոսի փոխարեն՝ մարդկանց մեղքերի թողության համար:

Հայաստանյայց եկեղեցու ս. պատարագն ուսուցողական նպատակով կարելի է բաժանել չորս մասերի.

Ա. Պատրաստություն.

Բ. Պաշտոն Շաշու.

Գ. Ս. պատարագ.

Դ. Վերջին օրհնությունն և արձակում:

Առաջին մասը կոչվում է պատրաստություն, որը տևում է մինչև այն պահը, երբ վարագույրը բացվում է առաջին անգամ: Պատրաստությունը բաղկանում է պատարագիչ քահանայի զգեստավորմամբ, համապատասխան սաղմոսներից ու աղոթքներից ծիսական ու խորհրդանշական նպատակով՝ պատարագ մատուցող քահանայի բարոյական մաքրության, ինչպես նաև հավատացյալներին հոգեպես պատրաստելու՝ զոհաբերության խորհրդին մասնակից դարձնելու համար: «Օրենք արկանելոյ սպաս եկեղեցոյ. յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել» (խորհրդարանական սրբազան պատարագի, 1866, էջ միածին, էջ 2—3):

Սուրբ պատարագն սկսվում է դպիրների կողմից երգվող քահանայի զգեստավորման շարականով, որը հատուկ է միայն մեր եկեղեցուն: «Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն...», մինչև Ս. Սեղանին սպասարկող սարկավագները 132-րդ սաղմոսն են ընթերցում ավանդատանը, որից հետո պատարագիչը մի աղոթք է արտասանում՝ Բրիստոսին ուղղված, որ իրեն արժանի դարձնի հոգևոր այս պաշտամունքին մոտենալու «Աղոթք առանձնական պատարագիչ քահանայի յառաջ քան զգեստաւորիլն» (էջ 5—6): Ապա նա օրհնում է իր զգեստի ամեն մի կտորը (սաղավարտ, շապիկ, փորուրար, գոտի, բազպան, վակաս, շուրջառ, թաշկինակ) պատշաճ մի աղոթքով և զգեստավորվում:

Պատարագիչն այնուհետև, ս. Սեղանին սպասարկող սարկավագի բուրվառի խունկըն օրհնելուց հետո, առաջնորդվում է եկեղեցու կենտրոնական առջև: Սարկավագներից մեկի օգնությամբ լվանում է ձեռքերը և փոխն ի փոխ արտասանում «Լուսցից սրբութեամբ զձեռս իմ և շուրջ եղեց զսեղանով քով, Տէր...» սաղմոսը (ԻԶ):

Ձեռքերի լվացումը խորհրդանշում է սրբոտի և հոգու մաքրության անհրաժեշտությունը ս. պատարագի փրկարար խորհրդին մոտենալուց առաջ: Լվացման պահին հավատացյալները պետք է նույնպես գիտակցեն իրենց մեղավոր լինելը և աղոթեն իրենց մեղքերի թողության համար:

Ապա պատարագիչը խոստովանում է Աստուծո, սրբերի, հոգևորականների և ծոցովորդի առաջ ու խնդրում նրանց, որ Աստուծոց թողություն հայցեն իր համար: Դասում գտնվող հոգևորականներից մեկը (չլինելու պարագային՝ սարկավագներից կամ աշխարհական հավատացյալներից մեկը) արտասանում է թողության աղոթքը. «Ողորմեսցի քեզ Աստուած հօգօրն և թողու-

թիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց...»: Խորհրդակատար քահանայի կողմից արտասանված օրհնության աղոթքից հետո, թողության աղոթքն արտասանող հոգևորականն ասում է. «Յիշեսցի և զսեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ, և պատարագիչը պատասխանում է. «Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ»: Ապա դպիրներն արտասանում են 100-րդ սաղմոսը. «Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեսուն ուրախութեամբ...», և բուրվառակիր սարկավագը՝ մի աղոթք (քարոզ), «Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր...», որին հաջորդում է քահանայի կողմից արտասանվող աղոթքը. «Ի մէջ տաճարիս...»: Այնուհետև պատարագիչը ս. խորան քարձրանալիս բուրվառակիր սարկավագի հետ փոխն ի փոխ արտասանում է 43-րդ սաղմոսը. «Դատ արա ինձ, Աստուած և իրա արա ինձ ի դատասանի իմում...», որի ավարտին կարդում է հետևյալ գեղեցիկ օրհնության ու փառաբանության աղոթքը. «Ի յարկի սրբութեան և ի տեղոջս փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս և մարդկան քաւարանիս, առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ Աշնացս և սուրբ տեղոյս, խոնարհեալ երկիրդի երկիրպագանեմք, զսուրբ և զհրաշալի և զյաղթող զտերութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք. և քեզ ընդ երկնային զգօրսն մատուցանեմք զօրհնութիւն և զփառս, ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաիտեանս յաիտեմից: Ամէն» (էջ 9):

Վարագույրը փակվում է: Մինչ խորհրդակատար քահանան կարդում է ս. Գրիգոր Նարեկացու աղոթքը՝ ուղղված ս. Հոգուն, (էջ 10—12), դպիրներից մեկը երգում է օրվա տոնին նվիրված մի մեղեդի: Այս պահին հավատացյալները պետք է գիտակցեն Աստուծո ներկայությունը իրենց ընդունելու որպես իր զավակները, երբ խոնարհ և ուրախ սրտով մոտենան նրան:

Փակ վարագույրի ետևը, խորանում, սպասարկող սարկավագը բերում է Աշխարհ ու գինին և մատուցում պատարագչին, որն ընդունում է հավատացյալների ընծաները հանուն Աստուծո և օրհնելով Աշխարհ դնում մետաղյա մի սկավառակի (մաղզմա) վրա, իսկ գինին «արկցէ խաչանիշ ի սկիհն» ու ծածկում: Ապա բուրվառակիր սարկավագի հետ փոխն ի փոխ արտասանում են 93-րդ սաղմոսը. «Տէր թագաւորեսց, վալելչութիւն զգեցաւ, զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էա՞ծ...», և սկիհին խընկարկելուց հետո դնում է այն «առ ընծաւարան սեղանոյն»:

Վարագույրի ետևում տեղի ունեցող արա-

րողությունը կոչվում է առաջադրություն, որը խորհրդանշում է հիշատակը Հիսուս Քրիստոսի կողմից կատարված զոհաբերությունը Գողգոթայի բարձունքին, խաչի վրա:

Առաջադրության ընթացքում հավատացյալները պետք է վերանորոգեն ու խորացնեն իրենց նվիրումի զգացումը Աստուծո հանդեպ և ցույց տան նրա կամքին ենթարկվելու իրենց պատրաստակամությունը և աղոթեն, որ նա ընդունի իրենց նյութական ու հոգևոր ընծաները և իր աստվածային ողորմությանն արժանի դարձնի իրենց:

Վարագույրը բացվում է. պատարագիչը բուրվառը ձեռքին կանգնած է խորանի կենտրոնում, ս. Սեդակի առաջ, սկսելու թափոթին, որը խորհրդանշում է Քրիստոսի երեք տարվա շրջագայությունը երկրի վրա: մարդկանց փրկության համար ճանապարհ հարթելու: Ինչպես որ Քրիստոսն աշխարհ գալով իր առաքելությամբ աստվածային պարգևներ բաշխեց, այնպես էլ պատարագիչը խորանից իջնելով խնկարկությունը շրջում է ժողովրդի մեջ. խնկարկությունը կատարվում է որպես խորհրդանշիչ շնորհների բաշխման և աղոթքի հաճության: Ինչպես որ անուշաբույր խունկը հաճելի է մարդուն, այնպես էլ սրտից բխած աղոթքը անուշ ու հաճելի է Աստուծո, հետևաբար խունկը, որը ընծայվում է Աստուծո, վառվելով բուրվառում վեր է առաքում իր անուշ բուրմունքը, խորհրդանշում քրիստոնյա հավատացյալի հոգին, որը վառվում է Աստուծո սիրով և ինքն իրեն նվիրում Ամենակալին, իր ջերմեռանդ աղոթքների միջոցով ստանալու համար հոգևոր պարգևները՝ աստվածային լույսն ու ս. Հոգու շնորհները:

Ահա այս հոգեգրավ նպատակով է, որ երբ պատարագիչը «Խաղաղություն ամենեցուն» ասելով խաչակնքում ու օրհնում է ժողովրդին, և սարկավազը խնկարկում է ու կոչ անում ասելով՝ «Աստուծոյ երկրպագեցուք», դպիրները միաբերան պատասխանում են՝ «Առաջի քո Տէր»:

Հավատացյալներն այս պահին պետք է խաչակնքեն և խոնարհաբար երկրպագեն Աստուծո:

Թափորի ընթացքում երբ պատարագիչ հոգևորականը խնկարկում է ժողովրդին, ամեն մի հավատացյալ պետք է խաչակնքի ու ասի՝ «Յիշեսցիր և զմեզ առաջի անմահ Գառիճն Աստուծոյ»: Դրան պետք է պատասխանի պատարագիչը՝ «Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառիճն Աստուծոյ»: Թափորի ընթացքում դպիրները երգում են խրկարկության շարականը, որը վերջանում է հետևյալ բառերով. «Ընկալ առ ի մեճ զխնկանուէր մաղթանս որպէս զպատարագն Աբէլի, զՆոյի և զԱբրահամու: Բարեխօսու-

թեամբ վերին քո զօրացդ միշտ անշարժ պահեա զԱթոռ հայկազնեայս»:

Խնկարկությունից հետո պատարագիչը խորան է բարձրանում և արտասանում փառաբանական մի աղոթք՝ ուղղված ս. Երրորդությանը. «Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաիտեանս յաիտեանց: Ամէն»: Ապա դպիրներից մեկը արտասանում է «Ժամամուտ ըստ պատշաճի աւուրն» (Էջ 14): Ս. պատարագի խորհրդի այս մասի գլխավոր իմաստն այն է, որ Քրիստոսի անունով ի մի հավաքված հավատացյալները մի մարմին են կազմում եկեղեցու ամբողջության մեջ, որը շտեմարանն է աստվածային ճրջմարտության:

Ս. պատարագի սկզբնավորության պահին շեշտվում է նաև այն իրողությունը, որ եկեղեցին Աստուծո թագավորությունն է՝ հիմնված Հիսուս Քրիստոսի կողմից: Պատարագի այս պահին հավատացյալները պետք է գիտակցեն, որ իրենք Աստուծո աղ թագավորության մաս են կազմում և Քրիստոսի մարմնի, այսինքն եկեղեցու անդամներն են, և որ եկեղեցին Աստուծո խոսքի քարոզությամբ և ուսուցմամբ լուսավորում է իրենց միտքն ու հոգին:

Ապա պատարագիչն արտասանում է մի աղոթք (Էջ 15), որով նա Աստուծո ողորմությունն ու գութն է հայցում եկեղեցուն հավաքված հավատացյալների համար: Դպիրները երգում են հավուր պատշաճի Ծաշու շարականը, որի ավարտին ս. Սեդակին սպասարկող սարկավազը մոտենում է պատարագչին և նրանից ստանում աստվածային լույսը՝ ս. Ավետարանը, ընթերցելու «յունկն ժողովրդեան», մինչ դպիրները երգում են Քրիստոսին ուղղված «Սուրբ Աստուած, սուրբ և հօր, սուրբ և անմահ» շարականը, և սարկավազը դառնում է խորանի շուրջը՝ Ավետարանը երկու ձեռքով բարձր բռնած: Այն անձը, որ կարդալու է Ծաշու ընթերցվածը, մոտենում է ատյանի կենտրոնին, համբուրում Ավետարանը և ստանում պատարագի օրհնությունը:

Այնուհետև աշխարհի խաղաղության և եկեղեցու անասանության համար աղոթելու սարկավազների կողմից արտասանված կոչերից (քարոզներից) հետո դպիրները երգում են «Տէր Ողորմեա», որից հետո կարդացվում է օրվա ս. գրական ընթերցվածը՝ սովորաբար Եսայի մարգարեի գրքից և Պողոս առաքյալի թղթերից: «Ծաշու Գրքի» ընթերցումից հետո սարկավազը բարձրաձայն եղանակով խորանից կարդում է օրվա Ավետարանի պատգամը, որից հետո արտասանում նիկիական «հավատո հանգանակը», այսինքն «հավատամբ»-ը,

որտեղ ամփոփված է քրիստոնեական եկեղեցու դավանանքը՝ երկնքի և երկրի արարիչ Աստուծո և նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մարդեղությանը, առաքելությանը, քարոզությանը, փրկագործ չարչարանքներին, խաչելությանը, թաղմանը, հարությանը և համբարձմանը, և Հոգու գալստյանն ու վերջին դատաստանին վերաբերող վարդապետությանը, ինչպես նաև մի, ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցու հաստատմանը:

«Հավատամք»-ի պահին հավատացյալները պետք է միացնեն իրենց ձեռքերը ի նշան համաձայնության ու վերանորոգեն իրենց հավատքը եկեղեցու հիմնական ուսուցումների համաձայն և խոնարհաբար ենթարկվեն քրիստոնեական հավատքի պարտավորություններին ու պահանջներին: Նրանք պետք է ջանան նաև գորացնել ու ամրապնդել իրենց վճռականությունը՝ հավատքը դարձնելու իրենց կյանքի առաջնորդ, և լուսավորեն իրենց միտքը հավատքից բխող նշմարիտ լույսով:

«Հավատամք»-ից հետո արտասանվող աղոթքները, որոնք վերաբերում են Քրիստոսի չարչարանքներին, մի անգամ ևս հիշել են տալիս, որ հավատացյալները պետք է դիմանան աշխարհում գոյություն ունեցող փորձություններին, ամուր և հաստատ մեղան իրենց հավատքի վրա: Ապա սարկավագների կողմից արտասանվող հայցողական «քարոզներում» խնդրվում են սուրբ Հոգու պարգևները, որպեսզի հավատացյալները հոգեպես և բարոյապես զորանան՝ պայքարելու չարի դեմ աշխարհում: Հավատացյալներն այս պահին պետք է ուշադիր, միամիտ փնտրեն լինեն և պատրաստ՝ աստվածային սիրտ և զոհաբերության մեծ խորհրդին մասնակից դառնալու:

Այստեղ վերջանում է արարողության երկրորդ մասը և սկսվում սուրբ զոհաբերության մասը (ս. պատարագ), որը խորհրդանշում է Քրիստոսի փրկագործ չարչարանքները, խաչելությունը, մահը և հարությունը՝ անարյուն վերակապարումով:

Ս. պատարագի այս մասն սկսվում է այն պահին, երբ սարկավագը կատարում է վերաբերման արարողությունը (ընծաների մատուցում)՝ ս. սկիհը խորանի շուրջ դարձնելով և հանձնելով պատարագին: «Ապա ի սարկազագն վերաբերիցի սրբազան հացըն և զանմահութան բաժակն ի սուրբ սեղանն» (Էջ 20): Այս մասը դարձյալ խորհրդանշում է Քրիստոսի աշխարհ գալը որպես թագավոր, որը քայլում է հաղթելու մեղքին ու չարին և խաչ բարձրանում: Խաչը «սեղան»-ն էր Քրիստոսի զոհաբերության:

Պատարագի այս մասը փրկագործության խորհրդի սիրտն է հանդիսանում: Հնում միայն մկրտվածներն ու հավատացյալները կարող էին մասնակից դառնալ այս խորհրդին: Դրա համար էլ այս պահն սկսելուց առաջ, անապով սարկավագի հրամայումն, անցյալում երախաներն (չմկրտվածներ) ու թերահավատները դուրս էին գալիս եկեղեցուց: Այս պահին պատարագի հոգևորականն ըստ իր կարգին մերկանում է արտաքին զարդարանքներից և դառնում պարզ խորհրդակատար քահանա՝ հանելով իր սաղավարտը, հողաթափերը և այլն:

Դպիրները երգում են հավուր պատշաճի մի մեղեդի, և պատարագիչը սկիհը սարկավագից վերցնելով դրանով օրհնում է ծողովրդին ու ապա դնում զոհաբերության սեղանին: Ապա խնկարկում է սկիհին, լվանում մատները և մի աղոթք արտասանում: Այստեղ խնկարկությունը կատարվում է ի հիշատակ լուղաբեր կանանց կողմից Հայության առավոտյան Քրիստոսի գերեզմանի համար բերված խնկի:

Վերաբերման (ընծաների մատուցման) պահին հավատացյալները պետք է դրսևորեն հավատքի, հույսի և սիրտ նշաններ և խնդրեն Աստծուն, որ նա ընդունի իրենց հոգևոր ընծաները՝ աղոթքն ու հավատքը ի Քրիստոս:

Ողջոյն-ի պահն է: Արարողության այս պահը, որի ընթացքում սարկավագը, ս. Սեղանին խնկարկելուց ու ս. սկիհը համբուրելուց հետո, բարձրաձայն ասում է. «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան», և իջնում առջան ու «ողջոյն»-ի համբույր փոխանցում հոգևորականներից ավագին և նրա միջոցով՝ հավատացյալներին: Սույն «ողջոյն»-ը խորհրդանշում է Քրիստոսի և հավատացյալների միջև կնքված հաշտությունը ու Հոգու ներգործությամբ և եկեղեցու միությունը՝ աստվածապաշտության մեջ: «Ողջոյն»-ը փոխանցողն ասում է. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, իսկ ստացողը՝ պատասխանում. «Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»: Եկեղեցում փոխանցված սույն «ողջոյն»-ը մագնիսական մի ուժ է, որը հոգեկան կապերով բոլոր հավատացյալներին իրար է միացնում:

«Ողջոյն»-ն ավարտված է. սկսվում է ս. պատարագի ամենից խորհրդավոր պահերից մեկը: Դպիրները վերացած հրեշտակաձայն երգում են «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց...»-ը: Պատարագիչն իր ծածուկ աղոթքում հիշում է Քրիստոսի զոհաբերումը և ապա, զոհություն հայտնելուց ու նշխարը կտրելուց հետո, կատարում հիշատակությունը Վերջին ընթրիքի ընթացքում

Տիրոջ կողմից արտասանված «Առեք, կերեք, այս է մարմին իմ» և «Առեք ի սմանէ ամենեքեան, այս է արին իմ՝ Նորոյ Ուխտի» պատգամը, որին հաջորդում է «Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք» աղոթքը՝ ի նշան այն փոխհատուցման, որ հավատացյալներն իրենց հնարավորության սահմանում կատարում են Աստուծոյ կողմից իրենց տրված անասանական սիրտ և ողորմության դիմաց: Այս մասը խորհրդանշում է նաև **Քրիստոսի մահը խաչի վրա**: «Եվ յաշխարհակեցոյցն և յառիթն փրկութեան մերոյ եկեալ կամա ի խաչն» (Էջ 24): Ս. պատարագի խորհրդի այս պահին հավատացյալները պետք է գիտակցեն Աստուծո՝ իրենց և համայն մարդկության հանդեպ տաժաժ մերն ու ողորմությունը և գոհությունն հայտնեն նրան իրենց ամբողջ սրտով:

Հասել ենք ս. պատարագի խորհրդի հիմնական մասին: Այս պահին, երբ դպիրները երգում են «Որդի Աստուծոյ»-ն, պատարագիչն իր աղոթքներում ոգեկոչում է ս. Հոգուն, որ նրա ներգործությամբ սկիհում գտնվող հացն ու գինին ըստ մեր եկեղեցու դավանության «ճշմարտապէս» և «ստուգապէս» փոխակերպվեն Քրիստոսի մարմնին ու արյանը: Այս մասը խորհրդանշում է նաև այն պահը, երբ Քրիստոսի մարմինը գերեզմանում փառավորվելով դարձավ հոգեվոր մարմին: Հետևաբար նշխարն ու գինին «ճշմարտապէս» դառնում են Քրիստոսի մարմնին ու արյունը և խորհրդանշում նրա ներկայությունը: Ս. Հոգու վերակոչման այս պահին հավատացյալները պետք է աղոթեն երկնավոր Հորը, որ նա իր ս. Հոգին ուղարկի, որպեսզի իրենք իրենց մեղքերի քաղությունից հետո կարող լինեն Քրիստոսի և նրա եկեղեցու հետ մեկ մարմին կազմած ներկայանալ Աստուծո:

Ս. պատարագի բուն խորհրդի կատարումից հետո քահանան աղոթում է եկեղեցու անասանության և աշխարհի խաղաղության համար և ապա հիշատակում Աստվածածնին, Հովհաննես Մկրտչին, Ստեփանոս նախավկային և բոլոր այն սրբերին, որոնք իբրև հաղթական եկեղեցու անդամներ անդենական աշխարհում մաս են կազմում նաև այս երկրի վրա գինվորյալ եկեղեցուն, և որով խորհրդանշվում է եկեղեցու միությունն ու անբաժանելիությունը: Սարկավագների կողմից կատարվող, առաքյալների, մարգարեների Հայաստանյայց և ընդհանուր եկեղեցու սրբերի, ճգնավորների, բարեպաշտ թագավորների, աստվածասեր իշխանների անվան, ինչպես նաև բոլոր ննջեցյալների հիշատակության

ժամանակ դպիրները երգում են «Յիշեա Տէր և Ողորմեա»:

Ապա սարկավագները միաբերան երգում են «Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ, Տէ՛ր Աստուած մեր վասն սուրբ և անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգևեցես: Սովա շնորհեա՛ զւեր, զհաստատութիւն և զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցոյ և ամենայն ողղափառ եպիսկոպոսաց. եպիսկոպոսապետին մերոյ, և պատուական Հայրապետին Ամենայն Հայոց Տեսն..... և քահանայիս որ զպատարագս մատուցանէ»:

Պատարագիչն իր լուռ աղոթքում հիշում է բոլոր այն ննջեցյալներին, որոնց համար ս. պատարագի ավարտին հոգեհանգստյան պաշտոն է խնդրվել:

Ընդհանուր հիշատակության ժամանակ հավատացյալները պետք է հիշեն անցյալ ժամանակների ննջեցյալ հավատացյալներին և աղոթեն նրանց համար, ովքեր Քրիստոսով ապրեցին և մահացան. և ովքեր իրենց հավատքի ջանք վառ պահեցին և համձնեցին հաջորդող սերունդներին: Իսկ մասնավոր հիշատակության ժամանակ հավատացյալներից յուրաքանչյուրը պետք է հիշի և աղոթի իր ննջեցյալների համար, որոնց հիշատակին հոգեհանգստյան սպաշտոն է կատարվելու ս. պատարագի ավարտին:

«Հայր մեր»-ի պահին է: **Տերունական աղոթքը** երգվում է որպես փառաբանություն **Աստուծո**, որ ընդունեց հավատացյալների մատուցած ընծաները և դրանք Քրիստոսի մարմնին ու արյանը փոխարկելով վերադարձրեց նրանց ս. հաղորդության ձևի տակ իբրև հոգևոր սնունդ: Ս. պատարագի այս պահին քահանան երկրպագում է Աստուծուն և փառաբանական աղոթքի ավարտին «առցէ զսուրբ հացն ի ձեռն.... և բարձրացուցէ ակներև ամենայն ժողովրդեանն»՝ ասելով «Ի սրբութիւն սրբոց», որը խորհրդանշում է Քրիստոսի համբարձումը երկինք:

Դպիրների կողմից երգվող ս. Երրորդությանը նվիրված փառաբանությունից հետո («Ամէն Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ») պատարագիչը մասնավոր մի աղոթքի ժամանակ «զսուրբ Մարմինն ողջ թացցէ յանապական արիւնն» և ապա չորս մասի բաժանում: Սրանով խորհրդանշվում է փրկությունը Քրիստոսի արյամբ, երբ հավատացյալների մեղքերը լվացվում են նրա սրբարար արյունով: Այնուհետև պատարագիչը բարձրացնում է սկիհը «յակներև

ժողովրդեանն» և մասներով սրբագործված ճշխարի մի մասը բռնած կոչ անում փառաբանել Տիրոջը և ասում շեշտելով՝ «Սա է կեանք, յոյս, յարութիւն, քառութիւն և թողութիւն մեղաց» (էջ 32—33):

Վարագույրը փակվում է: Դպիրները երգում են «Քրիստոս պատարագեալ»-ը, իսկ քահանան ծածկաբար աղոթում բոլորի, նույնիսկ թշնամիների համար և Աստծուց խնդրում, որ ների նրանց: Ապա ճաշակում է ս. հաղորդությունը և ծածուկ մի աղոթք արտասանում:

Վարագույրը բացվում է: Սարկավագը քարձրածայն հրավիրում է հավատացյալներին հաղորդվելու «երկիտլի և հաւատով յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարութ»: Ս. հաղորդության պահին դպիրները երգում են մի մեղեդի:

Հաղորդության ավարտին քահանան օրհնում է հավատացյալ ժողովրդին, և վարագույրը փակվում է: Դպիրները երգում են «Լցաք ի բարութեանց քոց Տէր...» և «Գոհանամք զքէն Տէր...» գոհաբանական երգերը: Գոհաբանության պահին հավատացյալները պետք է իրենց միտքը կենտրոնացնեն այն բանի վրա, ինչ տեղի է ունեցել իրենց հոգում, և որոշեն իրենց կյանքն աշխարհում դարձնել ավելի լուսավոր ու իմաստալից, շնորհիվ այն պարգևների, ո-

րոնք ստացվել են ս. պատարագի կատարումով:

Քահանան սկիհն ու ձեռքերը լվանալուց հետո դնում է աղավարտը և հագնում հողաթափերը: Այստեղ ավարտվում է պատարագի երրորդ մասը (ս. պատարագ): Վարագույրը նորից է բացվում, և նա քարձրածայն արտասանում է Հովհան Ոսկեբերան հայրապետի աղոթքը՝ ուղղված Աստծուն «որ, օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ, Տէր», որին հետևում է վերջին Ավետարանի ընթերցումը ատյանում: Ըստ Նոր Կտակարանի ուսուցման, Հովհանն Ոսկեարանի «և Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ» (Հովհ. Ա. 14) բառերը աստվածաբանական հիմք են ծառայում ս. պատարագի խորհրդի վարդապետությանը:

Հովհանն Ոսկեարանի խոսքերը լսելով, հավատացյալները պետք է գիտակցեն, որ հաղորդության միջոցով է, որ Աստուծո խոսքերը բնակվում են իրենց մեջ:

«Օրհնեալք եղերութ ի շնորհաց ս. Հոգւոյն: Երթայք խաղաղութեամբ և Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն». քահանայի «վերջին օրհնություն-ից և արձակում-ից» հետո հավատացյալները, եկեղեցուց դուրս գալու ժամանակ, պետք է գիտակցեն, որ իրենց հետ են տանում Տիրոջ օրհնությունը և սուրբ Հոգու շնորհները:

ՍԱՐԳԻՍ ՍՐԿ. ՍԱՐԳՍՅԱՆ

